ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-21-9/44-3

ք. Երևան 05-ը ----11---------- 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս **ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ՝ Կ. Բրուտյանի,** ով գործում է է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Գնորդ»,** մի կողմից, և **«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Բ. Թադևոսյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Վաճառող»** մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***35,649,935 (երեսունհինգ միլիոն վեց հարյուր քառասունինը հազար ինը հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, բացառությամբ պայմանագրի Հավելված 1-ով սահմանված 10-րդ անվանատողով նախատեսված Ապրանքի, որի մասով Վաճառողը ԱԱՀ չի վճարում:***

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Պայմանագրի կատարման փուլում առաջացող՝ ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա հարկերը (ակցիզային հարկ, բնապահպանական հարկ և այլն) հաշվանցվում և ՀՀ պետական բյուջե են վճարվում Վաճառողին վճարման ենթակա գումարից:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակի: Վճարումն իրականացվում է հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 24.12.2021թ.:***

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել

---

21 *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Սույն պայմանագրի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը**:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011144129 ՀՎՀՀ 02522157 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ Ք. Երևան, Արզումանյան 32-10 «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ Հ/Հ 217002182558001 ՀՎՀՀ 01210095 տնօրեն Մ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված 1
Ն ԳՀԱՊՁԲ-21-9/44-3 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Ապրանքի անվանում	Տեխնիկական բնութագիր	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը
1.	Միկոպլազմա IST 2, թեստ	ՈՒրոգենիտալ քսուքներում միկոպլազմա ուրեոպլազմա հայտնաբերման, քանակական որոշման, 9 հակաբակտերիալ պրեպարատների նկատմամբ զգայնության հավաքածու, լրակազմում առնվազն 25 թեստ, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ + 2°C -ից + 8°C ջերմաստիճանում,	MYCOPLASMA IST 2	BioMerieux
2.	Արյունային հինմային ագար	Արյունային ագարի հիմք 500 գր, գործարանային պլաստիկե փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում:	BLOOD AGAR BASE	Liofilchem
3.	Մանիտ աղային ագար	Մանիտ աղային ագար ստաֆիլոկոկերի աճեցման համար 500 գր, գործարանային պլաստիկե փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում:	Mannitol Salt Agar	Liofilchem
5.	Աղային 0,45% լուծույթ 3x500ml	VITEK սարքի աշխատանքային աղային լուծույթ 0.45 %, լրակազմում՝ 3 x 500 մլ, գործարանային փաթեթավորմամբ, շիշ (պլաստիկե, ապակյա կամ այլ): Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում:	SALINE SOLUTION	BioMerieux
6.	Պոլիստերինային փորձանոթներ (12x75 մմ)	Պոլիստերենային փորձանոթներ (12x75 մմ) նախատեսված VITEK 2 Compact սարքի համար: Չափսերը՝ 12x75 մմ, 1x2000 կամ համարժեք քանակի, գործարանային փաթեթավորումամբ:	EIA-RIA-ROHRCHEN	Greiner Bio-One
7.	API հանքային յուղ	API հանքային յուղ: 1x125 մլ գործարանային փաթեթավորմամբ:	API MINERAL OIL	BioMerieux
8.	VITEK 2 ANC անաէրոբ մանրէների տարբերակման քարտ	VITEK 2 ANC անաէրոբ մանրէների տարբերակման քարտ: Լրակազմում՝ առնվազն 20 քարտ, գործարանային փաթեթավորմամբ:	ANC test	BioMerieux
9.	Անաէրոբ գեներատորի ինդիկատորներ	Անաէրոբ գեներատորի ինդիկատորներ: Լրակազմում առնվազն 50 երիզ, գործարանային փաթեթավորմամբ:	ANAEROBIC INDICATOR	BioMerieux
10.	BTA փոխացանքս	Լրակազմում առնվազն 100 հատ, գործարանային փաթեթավորմամբ:	STERILE AIRWAY NEEDLES	BioMerieux
11.	Գլյուկոզա թեսթ	Reflotron Glucose, նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար: Լրակազմում՝ առնվազն 30 ստրիպ հերմետիկ փակ տուփով, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Glucose 30 str.	Roche Diagnostics
12.	Հիմնային ֆոսֆատազա թեստ	Reflotron ALP , նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար: Լրակազմում՝ առնվազն 30 ստրիպ հերմետիկ փակ գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-ALP 30 str.	Roche Diagnostics
13.	Պանկրեատիկ ամիլազա թեստ	Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար նախատեսված Reflotron Pankreas-Amylase: Լրակազմում առնվազն 15 ստրիպ, հերմետիկ փակ գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-P-Amylase 15 Str.	Roche Diagnostics
14.	Ամիլազա թեստ	Reflotron Amylase, նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար: Լրակազմում՝ առնվազն 15 ստրիպ, հերմետիկ փակ գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Amylase 15 Str.	Roche Diagnostics
15.	Բիլիռուբին թեստ	Reflotron Bilirubin, նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար: Լրակազմում՝ առնվազն 30 ստրիպ, հերմետիկ փակ գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Bilirubin 30 Str.	Roche Diagnostics
17.	Կրեատինին թեստ	Reflotron Creatinine , նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար: Լրակազմում՝ առնվազն 30 ստրիպ հերմետիկ փակ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Creatinin 30 Str.	Roche Diagnostics
18.	Գամմա գլուտամիլ տրանսֆերազա թեստ	Reflotron GGT, նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար: Լրակազմում՝ առնվազն 30 ստրիպ, հերմետիկ փակ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-GGT 30 Str.	Roche Diagnostics
19.	ALS թեստ	Reflotron GPT(ALT) , նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար: Լրակազմում՝	Reflotron-GPT 30 str.	Roche

		առնվազն 30 ստրիպ, հերմետիկ փակ, գործարանային փաթեթավորմամբ:		Diagnostics
20.	ԱՍՏ թեստ	Reflotron GOT(AST), նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար: Լրակազմում՝ առնվազն 30 ստրիպ, հերմետիկ փակ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-GOT 30 str.	Roche Diagnostics
21.	Կալիումի 30 թեսթ	Reflotron Kalium (potassium), նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար: Լրակազմում՝ 30 ստրիպ հերմետիկ փակ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Potassium	Roche Diagnostics
23.	Միզանյութ թեստ	Reflotron Urea, նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար: Լրակազմում՝ առնվազն 15 ստրիպ, հերմետիկ փակ, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron-Urea 15 Str.	Roche Diagnostics
24.	Քլին և չեկ	Ռեֆլոտրոն քլին և չեկ: Լրակազմում 15 հատ, նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար, գործարանային փաթեթավորմամբ:	Reflotron Clean+Check	Roche Diagnostics
29.	Ամիլազա Պանկրեատիկ 200 թեսթ	Լրակազմում 200 թեսթ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	AMY-P, 200 Tests, cobas c, Integra	Roche Diagnostics
30.	Դ-Դիմեր Gen 2 D-DI 100թեսթ	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	D-Dimer Gen.2, 100Test, cobas c Integra	Roche Diagnostics
31.	Կալիբրատոր Հոմոսցիստեին հավաք 2X 3մլ	Լրակազմում 2x3մլ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Homocysteine Calibrator Kit 2x3ml	Roche Diagnostics
32.	Թիրեոգլոբուլին 100 թեսթ	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	TG G2 Elecsys cobas e 100	Roche Diagnostics
33.	Կալցիտոնին 100 թեսթ	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Calcitonin	Roche Diagnostics
34.	Պրո-GRP 100 թեսթ	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	proGRP Elecsys cobas e 100	Roche Diagnostics
35.	Սիֆիլիս 100 թեսթ	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Syphilis, 100 tests	Roche Diagnostics
36.	Թիրեոգլոբուլին CS կալիբրատոր	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	TG G2 CS Elecsys	Roche Diagnostics
37.	Կալցիտոնին CS կալիբրատոր	Կալիբրատոր նախատեսված Կալցիտոնին ռեագենտի համար, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Calcitonin CalSet	Roche Diagnostics
38.	Պրո-GRP CS կալիբրատոր	Լրակազմում 4x1մլ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	proGRP CS Elecsys	Roche Diagnostics
39.	Հակամյուլերային հորմոն CS	Լրակազմում 4x1մլ քանակի, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	AMH CS Elecsys V2	Roche Diagnostics
51.	Զտիչ ջրի դեիոնիզատորի համար	Զտիչ LC109, նախատեսված՝ Medica Pro R60 ջրի դեիոնիզատորի համար, 0.05 միկրոն թողունակությամբ, գործարանային փաթեթավորմամբ:	LC 109 - 0.05 Micron ultra-microfilter (UMF)	ELGA
52.	Քարթրիջներ ջրի դեիոնիզատորի համար	Քարթրիջներ LC174, նախատեսված՝ Medica Pro R60 ջրի դեիոնիզատորի համար, գործարանային փաթեթավորմամբ:	LC 174 - Medpure L1 DI Pack	ELGA
53.	Նախնական զտիչ ջրի դեիոնիզատորի համար	Նախնական զտիչ LC177, նախատեսված Medica Pro R60 ջրի դեիոնիզատորի համար, գործարանային փաթեթավորմամբ:	LC 177 – Protek L2 Pretreatment Cartridge	ELGA

54.	LC180 ռևերսիոսմոսային զտիչ	Ռևերսիոսմոսային զտիչ, նախատեսված՝ Medica Pro R60-ի ջրի դեիոնիզատորի համար, LC180, գործարանային փաթեթավորմամբ:	LC 180 - 60 l/hr RO Cartridge	ELGA
55.	LC181 CO2 զտիչ	Զտիչ նախատեսված՝ Medica Pro R60-ի ջրի դեիոնիզատորի համար, LC181, գործարանային փաթեթավորմամբ:	LC 181 - MODULE DEGASSER E-CARTRIDGE	ELGA
57.	Մյուլլեր- Խինտոն ագար	Նախատեսված է միկրոօրգանիզմների աճեցման համար, 500 գր, գործարանային պլաստիկե փաթեթավորմամբ:	MUELLER HINTON AGAR	Liofilchem
61.	Խնամքի հավաք e 411-ի կես տարվա համար	Խնամքի հավաք՝ 411-ի համար, լրակազմը պարունակում է Nozzle seal pipetor, Tube for pinch(2PCS/180mm, Seal piieceP, seal Pice S, Tube465, tube 510, Mixing belt 3IM, Packing L443085 բաղադրիչները, գործարանային փաթեթավորմամբ	KIT MAINTENANCE E2010 / E411 6 MONTHS	Roche Diagnostics
62.	Խնամքի հավաք e 411-ի մեկ տարվա համար	Խնամքի հավաք՝ 411-ի համար, լրակազմը պարունակում է Tube for siper syring,Siper nozzle seal set2, Spring, Tube BW for measuring cell,Tube BW for sipper, O-ring NBR P4L456001, O-ring NBR P5 բաղադրիչները, գործարանային փաթեթավորմամբ	KIT SERVICE E411 12 MONTH	Roche Diagnostics

Ապրանքները պետք է ունենան

1.Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները

2.Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP կամ այլ):

3.Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր

4.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

5. Մատակարարման վայր սահմանել ք. Աբովյան, Արզնու խճուղի՝ կենտրոնական բժշկական բազա:

թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ

ԳՆՈՐԴ

ՀՀպաշտպանությաննախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԱԻ 033 75

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
չ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	մատակարարումը՝ 2021թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ.
1.	Միկոպլազմա IST 2, թեստ	լրակազմ	6	234000	1,404,000	6
2.	Արյունային հինմային ագար	կգ	2.5	72000	180,000	2.5
3.	Մանիտ աղային ագար	կգ	2.5	40800	102,000	2.5
5.	Աղային 0,45% լուծույթ 3x500ml	լրակազմ	4	25380	101,520	4
6.	Պոլիստերինային փորձանոթներ (12x75 մմ)	հատ	3000	85	255,000	3000
7.	API հանքային յուղ	հատ	5	9000	45,000	5
8.	VITEK 2 ANC անաէրոբ մանրէների տարբերակման քարտ	լրակազմ	1	180000	180,000	1
9.	Անաէրոբ գեներատորի ինդիկատորներ	լրակազմ	1	37200	37,200	1
10.	BTA փոխացանքս	լրակազմ	1	130000	130,000	1
11.	Գլյուկոզա թեսթ	լրակազմ	110	25560	2,811,600	110
12.	Հիմնային ֆոսֆատազա թեստ	լրակազմ	20	28400	568,000	20
13.	Պանկրեատիկ ամիլազա թեստ	լրակազմ	20	21350	427,000	20
14.	Ամիլազա թեստ	լրակազմ	50	17040	852,000	50
15.	Բիլիռուբին թեստ	լրակազմ	110	29040	3,194,400	110
17.	Կրեատինին թեստ	լրակազմ	110	34080	3,748,800	110
18.	Գամմա գլուտամիլ տրանսֆերազա թեստ	լրակազմ	35	29040	1,016,400	35
19.	ALS թեստ	լրակազմ	90	34080	3,067,200	90
20.	AUS թեստ	լրակազմ	90	34080	3,067,200	90
21.	Կալիումի 30 թեսթ	լրակազմ	10	40800	408,000	10
23.	Միզանյութ թեստ	լրակազմ	100	17040	1,704,000	100
24.	Քլին և չեկ	լրակազմ	6	5880	35,280.00	6
29.	Ամիլազա Պանկրեատիկ 200 թեսթ	լրակազմ	2	37332	74,664	2
30.	Դ-Դիմեր Gen 2 D-DI 100թեսթ	լրակազմ	3	285294	855,882	3
31.	Կալիբրատոր Հոմոսցիստեին հավաք 2X 3մլ	լրակազմ	2	51000	102,000	2
32.	Թիրեոգլոբուլին 100 թեսթ	լրակազմ	2	96390	192,780	2
33.	Կալցիտոնին 100 թեսթ	լրակազմ	1	301613	301,613	1
34.	Պրո-GRP 100 թեսթ	լրակազմ	1	405654	405,654	1
35.	Սիֆիլիս 100 թեսթ	լրակազմ	12	213996	2,567,952	12
36.	Թիրեոգլոբուլին CS կալիբրատոր	լրակազմ	1	30702	30,702	1

37.	Կալցիտոնին CS կալիբրատոր	լրակազմ	1	300594	300,594	1
38.	Պրո-GRP CS կալիբրատոր	լրակազմ	1	294780	294,780	1
39.	Հակամյուլերային հորմոն CS	լրակազմ	1	160514	160,514	1
51.	Զտիչ ջրի դեիոնիզատորի համար	լրակազմ	2	270000	540,000	2
52.	Քարթրիջներ ջրի դեիոնիզատորի համար	լրակազմ	2	255000	510,000	2
53.	Նախնական զտիչ ջրի դեիոնիզատորի համար	լրակազմ	2	530000	1,060,000	2
54.	LC180 ռևերսիոսմոսային զտիչ	լրակազմ	1	1560000	1,560,000	1
55.	LC181 CO2 զտիչ	լրակազմ	2	1500000	3,000,000	2
57.	Մյուլլեր- Խինտոն ագար	կգ	0.5	92400	46,200	0.5
61.	Խնամքի հավաք e 411-ի կես տարվա համար	լրակազմ	1	120000	120,000	1
62.	Խնամքի հավաք e 411-ի մեկ տարվա համար	լրակազմ	1	192000	192,000	1
Ընդամնեը					**35,649,935**	

ԳՆՈՐԴ

ՀՀպաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՈՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԱԻ 0337543

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-9/44-3 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի			
չ/հ	CPV և ապրանքի անվանումները	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ պետական բյուջեի 2021թ. հատկացումների հաշվին, 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 24.12.2021թ., ընդ որում՝
1.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Միկոպլազմա IST 2, թեստ	33691420/140	1,404,000
2.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ/**Արյունային հինմային ագար	33691422/8	180,000
3.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ/**Մանիտ աղային ագար	33691422/9	102,000
5.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Աղային 0,45% լուծույթ 3x500ml	33691420/167	101,520
6.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր/**Պոլիստերինային փորձանոթներ (12x75 մմ)	33691167/57	255,000
7.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր/**API հանքային յուղ	33691167/55	45,000
8.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**VITEK 2 ANC անաէրոբ մանրէների տարբերակման քարտ	33691420/168	180,000
9.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Անաէրոբ գեներատորի ինդիկատորներ	33691420/157	37,200
10.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**BTA փոխացանքս	33691420/158	130,000
11.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Գլյուկոզա թեսթ	33691420/159	2,811,600
12.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Հիմնային ֆոսֆատազա թեստ	33691420/141	568,000
13.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Պանկրեատիկ ամիլազա թեստ	33691420/142	427,000
14.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Ամիլազա թեստ	33691420/160	852,000
15.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Բիլիռուբին թեստ	33691420/161	3,194,400
17.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Կրեատինին թեստ	33691420/162	3,748,800
18.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Գամմա գլուտամիլ տրանսֆերազա թեստ	33691420/143	1,016,400
19.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**ALS թեստ	33691420/144	3,067,200
20.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**AUS թեստ	33691420/145	3,067,200
21.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Կալիումի 30 թեսթ	33691420/146	408,000
23.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Միզանյութ թեստ	33691420/148	1,704,000
24.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Քլին և չեկ	33691420/149	35,280.00
29.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Ամիլազա Պանկրեատիկ 200 թեսթ	33691420/163	74,664
30.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Դ-Դիմեր Gen 2 D-DI 100թեսթ	33691420/169	855,882
31.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Կալիբրատոր Հոմոսցիստեին հավաք 2X 3մլ	33691420/170	102,000
32.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Թիրեոգլոբուլին 100 թեսթ	33691420/164	192,780
33.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Կալցիտոնին 100 թեսթ	33691420/173	301,613
34.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Պրո-GRP 100 թեսթ	33691420/172	405,654
35.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Սիֆիլիս 100 թեսթ	33691423/281	2,567,952

36.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Թիրեոգլոբուլին CS կալիբրատոր	33691423/272	30,702
37.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Կալցիտոնին CS կալիբրատոր	33691423/273	300,594
38.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Պրո-GRP CS կալիբրատոր	33691423/274	294,780
39.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Հակամյուլերային հորմոն CS	33691423/282	160,514
51.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Զտիչ ջրի դեիոնիզատորի համար	33691423/279	540,000
52.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Քարթրիջներ ջրի դեիոնիզատորի համար	33691423/265	510,000
53.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Նախնական զտիչ ջրի դեիոնիզատորի համար	33691423/266	1,060,000
54.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**LC180 ռևերսիոսմոսային զտիչ	33691423/280	1,560,000
55.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**LC181 CO2 զտիչ	33691423/267	3,000,000
57.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ/**Մյուլլեր- Խինտոն ագար	33691422/11	46,200
61.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Խնամքի հավաք e 411-ի կես տարվա համար	33691423/289	120,000
62.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Խնամքի հավաք e 411-ի մեկ տարվա համար	33691423/290	192,000
Ընդամենը			**35,649,935**

ԳՆՈՐԴ

ՀՀպաշտպանությաննախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

АН 0337548

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-21-9/44-3 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
N ԳՀԱՊՁԲ-21-9/44-3 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն